Օտարազգի իմիգրանտները հայ էլեկտրոնային մամուլում

Հեղինակ՝ Սոնա Մելիքջանյան



Երևան 2020

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ հանրային քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակ/ների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Բովանդակություն

Ներածություն 4
Միգրացիան մեդիայում. անդրադարձ միջազգային հետազոտական գրականությանը 7
Հետազոտության մեթոդաբանությունը 12
Իմիգրացիան դեպի ՀՀ և հայկական մեդիան 14
Իմիգրանտները հայկական օնլայն մեդիադաշտում 18
Իմիգրացիոն խոսույթներ և պատումներ 18
Իմիգրացիան՝ իբրև քաղաքական դաշտում դիրքավորվելու միջոց 24
Իմիգրանտների վիզուալիզացիան հայկական մեդիադաշտում 27
Իմիգրանտների ձայնն ու հայկական մեդիադաշտը 31
Եզրակացություններ և առաջարկներ 35
Օգտագործված փաստաթղթեր 39
Գրականության ցանկ 41

Ներածություն

Մեդիան կարևոր նշանակություն ունի ոչ միայն նորությունների ու տեղեկատվության, այլ նաև տարբեր գաղափարների և խոսույթների (discourses) ձևավորման և տարածման գործընթացում (Hall, 1990)։ Հասարակությունը, հաճախ, մեդիայի տրամադրած տեղեկատվության հիման վրա ձևավորում է պատկերացումներ իր համար դեռևս անծանոթ կամ քիչ ծանոթ երևույթների, իրադարձությունների և տարբեր խմբերի մասին (Saifuddin and Matthes, 2016)։ Անդրադառնալով ԶԼՄ-ներում միգրացիոն գործընթացների և միգրանտների ներկայացվածությանը՝ ոլորտի մասնագետները քննարկում են մեդիայի ազդեցությունը հասարակության մոտ իմիգրանտների և փախստականների կերպարների ձևավորման վրա։ Հասարակությունը, դեռևս չունենալով շատ գիտելիք ժամանող խմբերի վերաբերյալ, իր դիրքորոշումը և պատկերացումներն այդ խմբերի մասին ձևավորում է նաև հիմնվելով լրատվամիջոցների կողմից տրամադրած տեղեկատվության վրա։

Իմիգրանտների և փախստականների շուրջ ծավալվող քննարկումները և դրանց ուսումնասիրությունները նոր երևույթ չեն եվրոպական և ամերիկյան գիտական և հետազոտական դաշտում, քանի որ այդ հասարակությունները տարիներ շարունակ ընդունում են օտարերկրացիների։ Ի տարբերություն վերոհիշյալ երկրների՝ Հայաստանում օտարերկրացիների իմիգրացիան վերջին տարիների երևույթ է։ Ավելին, հայ հասարակությունն իր կառուցվածքով մոնոէթնիկ է (բնակչության 96%-ը հայ է), որն իր պատմության ընթացքում պարբերաբար կորցրել ու կրկին ձեռք է բերել ինքնիշխանությունը, որոշ ժամանակահատված ապրել է այլ գերտերությունների իշխանության ներքո՝ իբրև էթնիկ փոքրամասնություն։ Այս համատեքստում, իմիգրանտների համեմատաբար մեծ հոսքը, որը նկատվեց 2018 թվականից սկսած[1], նոր և հասարակության մեջ

[1] «Սահմանահատումների քանակը 2019 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»։ հասանելի է՝ http://migration.am/content/pdf/2019_border_ARM_0.pdf
«Սահմանահատումների քանակը 2018 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»։

դեռևս ընդհանուր կարծիք և խոսույթներ չձևավորած երևույթ է:

Օտարերկրակցիների ներգաղթը դեպի ՀՀ ակտիվ կերպով հանրային խոսույթի մեջ մտավ 2018 թվականի երկրորդ կեսից.իմիգրացիոն ներհոսքը հայտնվեց ԶԼՄ-ների, քաղաքական գործիչների և, ի պատասխան սրան, նաև պետական կառույցների և ոլորտի մասնագետների ուշադրության կենտրոնում: Կազմակերպվեցին մի շարք մասնագիտական հանդիպումներ, քննարկումներ՝ ուղղված իմիգրացիոն հոսքերի կառավարման ռազմավարության, վերահսկման մեխանիզմների, ՀՀ-ում իրավունքների և պարտականությունների սահմանման, հասարակության մեջ ինտեգրման և այլ հարցերի շուրջ: Վերջիններիս շարքից դուրս չմնացին նաև լրատվամիջոցներում միգրացիոն գործընթացների լուսաբանման հարցադրումները, ինչն արտացոլվեց ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության կողմից կազմակերպված «Մեդիա և միգրացիա» հանդիպումների շարքում[2]: Վերջինս նպատակ ուներ բարձրացնելու լրագրողների գիտելիքը միգրացիայի վերաբերյալ:

Միգրացիոն ծառայության նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպումների այս շարքը վկայում է մասնագետների կողմից միգրացիոն գործընթացների վերաբերյալ մեդիայի անդրադարձերին տրվող կարևորության մասին: Միևնույն ժամանակ, չկա հետազոտահեն գիտելիք այն մասին, թե ինչ

հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2018.pdf
«Սահմանահատումների քանակը 2017 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»:
Հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2017.pdf
«Սահմանահատումների քանակը 2016 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»:
Հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2016.pdf
«Սահմանահատումների քանակը 2015 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»:
Հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2015.pdf
ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պաշտոնական կայքում տեղ գտած նորություն՝ «Հայաստանի կառավարության կողմից մշտապես քայլեր են ձեռնարկվում հայաստան մուտքի արտոնագրերի տրամադրման գործընթացի և անօրինական միգրացիայի վերահսկման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ՝ այդ թվում նաեւ իրավական դաշտում»: 09.01.2019
Հասանելի է՝ http://migration.am/news/142

[2] ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պաշտոնական կայքում տեղ գտած նորություն՝ «Միգրացիոն ծառայությունը «Մեդիա եւ միգրացիա» խորագրով հանդիպումների շարքով կնպաստի ոլորտի վերաբերյալ լրագրողների գիտելիքների բարձրացմանը»: 06.04,2019,
Հասանելի է՝ http://migration.am/news/276

խոսույթներ են ձևավորվում և տարածվում դեպի Հայաստան իմիգրացիայի վերաբերյալ, ինչ տեղ ու դեր ունեն իմիգրանտներն այդ խոսույթներում, որքանով է լսելի նրանց ձայնը մեդիայում, միգրանտների լուսաբանման ինչ մոտեցումներ և ռազմավարարություններ գոյություն ունեն հայկական իրականությունում: Այս հետազոտությունը նպատակ ունի պատասխանել վերոհիշյալ հարցադրումներին:

Ուսումնասիրության առաջին հատվածն անդրադառնում է մեդիայում միգրացիայի լուսաբանման վերաբերյալ միջազգային հետազոտական գրականությանը, որը հայկական մեդիայի ուսումնասիրության մեթոդաբանության մշակման հիմք է հանդիսացել: Երկրորդ հատվածն նվիրված է դեպի ՀՀ միգրացիոն գործընթացների ներկայացմանը և հայկական մեդիադաշտին: Այնուհետև ներկայացված են կատարված հետազոտության արդյունքները, որին հաջորդում է ամփոփումն ու արդյունքների հիման վրա ձևավորված առաջարկները:

Միգրացիան մեդիայում. անդրադարձ միջազգային հետազոտական գրականությանը

Լրատվամիջոցներում միգրանտների մասին տեղ գտած նյութերի, միգրանտների, մասնավորապես իմիգրանտների մասին առկա խոսույթների, նրանց մասին «խոսալու» ձևի, նրանց պատկերման առանձնահատկությունների ուսումնասիրությունները տարիներ շարունակ գտնվում էեն միջազգային գիտական համայնքի ուշադրության կենտրոնում: «Մեդիա և միգրացիա» թեմայի մասին խոսելիս՝ հետազոտողներն անդրադառնում են դրանց տարբեր ասպեկտներին: Ուսումնասիրությունների մի մասը դիտարկում են իմիգրանտների և փախստականների շուրջ լրատվամիջոցներում տեղ գտած խոսույթները (Heidenreich, et al 2020; Gemi et al., 2013; Saifuddin, et al 2016): Այդ խոսույթների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իմիգրանտներն ու փախստականները մեդիաներում հիմնականում ձևակերպվում են վախի և սպառնալիքի համատեքստում: Սպառնալիքները բազմազան են. տնտեսական սպառնալիք, ազգային անվտանգության, ազգային ինքնության սպառնալիքներ, հանրային առողջության սպառնալիք և այլն: Gemi և մյուսները (Gemi et al., 2013) դուրս են բերում այն հիմնական խոսույթները, որոնց շրջանակներում մեդիայում ի հայտ են գալիս և քննարկվում են իմիգրանտներն ու փախստականները: Դրանք են՝

- Իմիգրանտներն իբրև երկիրն իրենցով լցնողներ,
- Իմիգրանտներն իբրև ընդունող երկրի աշխատանքային շուկան ապակայունացնողներ, իբրև էժան աշխատուժ,
- Իմիգրանտներն իբրև անվտանգության խնդիր առաջացնողներ, ինչը «ապացուցվում է» նրանց կողմից կատարված տարբեր հանցագործություններով, սև շուկայում ներգրավմամբ, մարմնավաճառությամբ և այլն,
- Իմիգրանտներն իբրև վիզային ռեժիմը խախտողներ,
- Իմիգրանտներն իբրև առողջական խնդիրներ առաջացնողներ և հիվանդություններ ներկրողներ:

Հեղինակների կողմից իմիգրանտների վերաբերյալ առկա խոսույթների դուրսբերումը ցույց է տալիս, որ դրանք մի քանիսն են, սակայն հետազոտությունների և գիտական գրականության ուսումնասիրության հիման վրա կարելի է նկատել, որ գերակշռող են տնտեսական ու ազգային անվտանգության սպառնալիքների մասին խոսույթները: Ավելին, Caviedes-ը (2015), իմիգրանտների ներկայացվածության առանձնահատկությունները ֆրանսիական, անգլիական և իտալական լրատվամիջոցներում ուսումնասիրում ու համեմատում է միմյանց հետ հենց տնտեսական և անվտանգության խոսույթների տարածվածության միջոցով. հեղինակը դիտարկում է, թե այս երեք երկրների լրատվամիջոցներում որ խոսույթն է առավել տարածված՝ տնտեսական, թե ազգային անվտանգության: Ուսումնասիրությունների արդյունքում հեղինակը հանգում է նրան, որ խոսույթների դոմինանտությունը փոփոխական է և պայմանավորված ժամանակահատվածի և հասարակության առանձնահատկությամբ: Ավելին, որոշ հետազոտություններ (Heidenreich et al., 2020) ցույց են տալիս, որ տարբեր են ոչ միայն խոսույթները, այլ նաև միգրացիայի վերաբերյալ քննարկումների տարածվածությունը՝ կախված նրանից տվյալ երկիրը դասվում է «ընդունող» (receiving), թե «չընդունող» (non-receiving) երկրների շարքին[3]: «Ընդունող» երկրների քաղաքական գործիչներն իրենց գրառումներում ավելի շատ են անդրադառնում ներգաղթին, քան «չընդունող» երկրների քաղաքական գործիչները: Հետազոտողները գալիս են այն եզրահանգման, որ իմիգրացիոն մեծ հոսքը և սոցիալական ու մեդիայի անդրադարձերն իմիգրացիային վերջինիս հանդեպ հատուկ ուշադրություն են հրավիրում: Մի կողմից, իմիգրացիոն հոսքի հետևանքով ի հայտ են գալիս մի շարք հարցադրումներ, խնդիրներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում լրատվամիջոցներում, իսկ մյուս կողմից, մեդիան ինքն է հանդիսանում տարբեր երևույթների վերաբերյալ կարծիքների, հարցադրումների և

[3] Հեղինակների կողմից «ընդունող» (receiving) և «չընդունող» (non-receiving) երկների դասակարգման հիմքում ընկած է ներգաղթողների և արտագաղթողների հարաբերակցությունը: Համապատասխանաբար, «ընդունող» է համարվում այն եկիրը, որտեղ ներգաղթյալների թիվը գերակշռում է արտագաղթողների թվին և հակառակը: Ուսումնասիրված երկրներում ներգաղթողների և արտագաղթողների մասին տեղեկատվության աղբյուր է հանդիսացել Եվրոստատի (Eurostat) 2018 թվականի տվյալների բազան:

գաղափարների ձևավորման ու տարածման աղբյուր: Նորությունների հրապարակումը հաճախ իմաստների ստեղծում է (meaning- making), և ոչ թե իրականության պատկերում (Tuchman, 1978; Schudson, 1997): Նորության ընտրությունը և դրան իմաստների վերագրումը մի գործընթաց է, որն ունի երկու կարևոր տարր՝ նորությունների հավաքագրում (տեղեկատվության ձեռք բերում տարբեր աղբյուրներից) և նորությունների ստեղծում (newsmaking) (տեղեկատվության ընտրություն և ներկայացում) (Gemi et al., 2013): Այս երկու տարրերը հավասարապես կարևոր են նորությունների հրապարակման համար. կախված տեղեկատվության աղբյուրից, ներկայացվելիք նորությունը կարող է ունենալ տարբեր երանգներ, ներկայացման տարբեր ձևեր, ինչն էլ իր հերթին ընթերցողի մոտ ստեղծում է համապատասխան պատկերացումներ ու տրամադրություններ:

Միգրանտների ներկայացվածությունը մեդիայում հաճախ լինում է անդեմ: Figenschou-ը և Thorbjørnsrud-ը (2015), անդրադառնալով լրատվամիջոցներում իմիգրանտների՝ իբրև առանձին անհատների տեսանելիությանը, քննադատում են թերթերը իմիգրանտներին «անդեմ», իսկ խնդիրները «խմբակային» ներկայացնելու, ներկայացնելու համար: Մեդիաները հակված չեն ցույց տալու խնդրի հիմքերն ու արմատները, փոխարենը նախընտրում են շեշտադրել բուն խնդիրը և այդ խնդիրը կրող խումբը՝ պատկերացում ստեղծելով, որ տվյալ խմբին պատկանող բոլոր մարդիկ պարտադիր նույն խնդիրների կրողներ են: Ի հակադրություն սրան՝ մարդակենտրոն նորություններն ու հոդվածները, իմիգրանտներին տալով «դեմք» և ներակայացնելով նրանց պատմությունները, առավել ակնառու են դարձնում ոչ միայն իմիգրացիոն խնդիրները, այլ նաև դրանց պատճառները, խնդիրներն առաջացնող գործոնները, անօրինական միգրանտ լինելու բարդությունները (Figenschou et al., 2015):

Անձնավորված պատմությունների ներկայացման և տարածման գործընթացում որոշ հեղինակներ կարևորում են լրատվամիջոցների դերը՝ պնդելով, որ այն կարող է ազդել ոչ միայն հանրային կարծիքի ձևավորման, այլ նաև պետական քաղաքականության փոփոխման վրա: Ihlen-ն ու Thorbjørnsrud-ը (2014) իրենց

հոդվածում ցույց են տալիս, թե ինչպես են մեդիայում տեղ գտած անձնավորված երեք հոդվածները բերել իմիգրացիոն քաղաքականության վերանայմանը և որոշ փոփոխությունների իրականացմանը: Հեղինակները շեշտադրում են անձնավորված պատմությունների կարևորությունը՝ գտնելով, որ հենց դրանք են նպաստել հանրության շրջանում իմիգրանտների նկատմամբ էմպատիայի առաջացմանը, որն էլ իր հերթին իմիգրացիոն քաղաքականության վերանայման յուրօրինակ ճնշման գործիք է հանդիսացել:

Այսպիսով, որոշ հետազոտողներ կարևորում են մարդակենտրոն և անհատակենտրոն պատումների առկայությունը մեդիայում, քանի որ դրանք միգրանտին ներկայացնում են իբրև առանձին անհատ, ով ունի իր սեփական խնդիրները, որոնք կարող են լինել անկախ ու տարբեր այն խմբի խնդիրներից, որին ինքը պատկանում է: Սա իր հերթին միգրանտին տարանջատում է որպես անհատ, ինչպես նաև կարող է առաջացնել որոշակի էմպատիա հանրության շրջանում: Մինչդեռ նավակներով եկող անդեմ ամբոխը ձևավորում է սպառնալիքի (տնտեսական, մշակութային, ֆիզիկական և այլն) ու վախի մթնոլորտ: Միևնույն ժամանակ, անձնավորված պատումների ներկայացումը կարող է իր հերթին ունենալ բարդություններ կապված լեզվական խոչընդոտների և իմիգրանտների «անտեսանելի» լինելու ցանկության հետ (Tyler and Marciniak, 2013): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրատվամիջոցներում հաճախ հայտնվում են ոչ լեգալ իմիգրանտները, հասկանալի է դառնում, որ նրանք, վախենալով «բացահայտված» լինելուց ու դրան հաջորդող հետևանքներից (օրինակ՝ արտաքսում ընդունող երկրից) խուսափում են բոլոր այն գործողություններից (նույնիսկ եթե դա վերաբերում է իրենց խնդիրների բարձրաձայնմանը), որոնք իրենց կդարձնեն «տեսանելի»: Չնայած Ihlen-ի ու Thorbjørnsrud-ի (2014) հոդվածը ցույց է տալիս իմիգրանտների խնդիրների բարձրաձայնման կարևորությունը, սակայն հեղինակներն անդրադառնում են արդեն իսկ բացահայտված իմիգրանտների ուսումնասիրությանը. այս պարագայում այլևս չկա իմիգրանտի՝ անտեսանելի մնալու ցանկությունը:

Հետազոտողների կողմից իմիգրանտների և փախստականների դիմավորված

ներկայացման խնդիրը քննարկվում է ինչպես վերբալ, այնպես էլ վիզուալ մակարդակում։ Իմիգրացիայի մասին նյութերը հաճախ ուղեկցվում են անդեմ ամբոխների նկարներով՝ ընթերցողի մոտ առաջացնելով տագնապ «անդեմ զանգվածի» հանդեպ (Bleiker et al., 2013)։ Մեդիադաշտում իմիգրանտների ու փախստականների վիզուալ ներկայացվածությունը հաճախ լինում է միակողմանի և ապամարդկայնացված, իսկ դիմավորված ու մարդակենտրոն նկարները, որոնք, ըստ հեղինակների, կարող են հասարակության մոտ առաջացնել կարեկցանք և էմպատիա, շատ քիչ տոկոս են կազմում մեդիադաշտում։

Միգրացիայի մասին մեդիայի անդրադարձերի վերաբերյալ վերջին տարիների ուսումնասիրություններում կարելի է նկատել իմիգրանտների անձնավորված կամ դիմավորված ներկայացվածության կարևորումը։ Ավելին, եթե նախկին ուսումնասիրություններում հանդիպում էինք իմիգրանտների մասին բացասական երանգ ունեցող խոսույթներին, ապա վերջին տարիներին կարելի է նկատել իմիգրանտների՝ իբրև իրավիճակի զոհերի խոսույթի առկայությունը (De Cleen et al., 2017)։ Վերջինս մասնագետների կողմից սահմանվում է իբրև մարդասիրական խոսույթ, որն ուղղված է բացահայտելու իմիգրանտների և փախստականների կյանքի պայմանները, ներկայացնելու նրանց իբրև իրավիճակի զոհեր և շեշտադրելու ընդունող հասարակության պատասխանատվությունը նրանց ընդունելու և ապրելու բարենպաստ պայմաններ ստեղծելու համար։

Հետազոտության մեթոդաբանությունը

Հայ էլեկտրոնային մամուլում իմիգրանտների վերաբերյալ առկա խոսույթները, իմիգրանտների ձայնի առկայությունն ու վիզուալ ներկայացվածությունն ուսումնասիրելու համար ընտրվել է բովանդակային վերլուծության մեթոդը: Վերջինս, միաժամանակ դասվելով և՛ քանակական, և՛ որակական մեթոդների շարքին, հնարավորություն է տալիս դուրս բերել անհրաժեշտ և՛ որակական, և՛ քանակական տեղեկատվությունը:

Ուսումնասիրության համար ընտրվել են այն 5 հայկական էլեկտրոնային թերթերը, որոնք ամենաշատն են ընթերցվում հասարակության կողմից: Ուսումնասիրվել են վերջին շրջանում հայկական լրատվական դաշտի վերաբերյալ կատարված հետազոտությունները հասարակության կողմից ամենաշատ ընթերցվող հայկական էլեկտրոնային թերթերը դուրս բերելու համար: ՀՀ մեդիայի սպառման և ապատեղեկածվության մակարդակի ուսումնասիրությանն ուղղված հետազոտության տվյալների համաձայն մարդկանց ամենանախընտրելի էլեկտրոնային մամուլն Azatutyun.am-ն է՝ 18.1%, այնուհետև News.am-ը՝ 10.7%, 1in.am-ը՝ 6.1%, 168.am-ը՝ 4.3%, tert.am-ը՝ 3.4%: (Սարգսյան Ռ. և այլոք, 2019:34): Հանրային կարծիքի ուսումնասիրությանն ուղղված 2018 թվականի հետազոտության տվյալների համաձայն մարդկանց կողմից ամենահաճախ այցելվող էլեկտրոնային լրատվամիջոցներն են azatutyun.am-ը՝ 41%, news.am-ը՝30%, 1in.am-ը՝18%, lurer.am-ը՝12%, mamul.am-ը՝10% (Public Opinion Survey: Residents of Armenia, 2018:69): Նույն հետազոտությունն իրականացվել է նաև 2019 թվականին, որի արդյունքների համաձայն ամենահաճախ այցելվող էլեկտրոնային լրատվամիջոցների մասին տվյալները գրեթե անփոփոխ են (Public Opinion Survey: Residents of Armenia, 2019:92):

Հիմնվելով վերոհիշյալ հետազոտությունների արդյունքների վրա, համադրելով և ընդհանրացնելով տվյալները՝ այս ուսումնասիրության համար ընտրվել են հետևյալ էլեկտրոնային թերթերը՝

- ✓ Azatutyun.am,
- ✓ 1in.am,
- ✓ Mamul.am:
- ✓ News.am,
- ✓ Lurer.com,

Էլեկտրոնային թերթերի ընտրությանը հաջորդել է վերլուծության ենթակա նյութերի առանձնացումը: Ուսումնասիրվել են վերոհիշյալ 5 էլեկտրոնային թերթերի 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունվարի մեկն ընկած ժամանակահատվածի բոլոր նյութերը, որի արդյունքում առանձնացվել են դեպի Հայաստան իմիգրացիայի և Հայաստանում իմիգրանտների վերաբերյալ բոլոր նյութերը: Վերլուծվել են այն նյութերը, որոնք վերաբերում են հնդիկ, իրանցի և պակիստանցի իմիգրանտներին: Իմիգրանտների այս խմբի ընտրությունը պայմանավորված է նրանց շուրջ ծավալված քննարկումների և ստորագրահավաքի ակտիվացմամբ և Հնդկաստանի Հանրապետության հետ վիզային ռեժիմի դյուրացմամբ: Ընդհանուր բովանդակային վերլուծության է ենթարկվել 125 հոդված (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Իմիգրանտների վերաբերյալ հոդվածների քանակը (2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունվարի 1-ը)



Վերլուծության քանակական մասն իրականացվել է նախապես մշակված քարտերի լրացման միջոցով, այնուհետև կատարվել է տեքստերի բովանդակային վերլուծություն, դուրս բերված կատեգորիաների և ենթակատեգորիաների կոդավորում (Schreier, 2014):

Բովանդակային վերլուծությունը համալրվել է Հայաստանում մեդիա դաշտը կարգավորող փաստաթղթերի, իմիգրացիայի վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությամբ և ոլորտի մասնագետների հարցազրույցների վերլուծությամբ:

Իմիգրացիան դեպի ՀՀ և հայկական մեդիան

Միգրացիան մշտապես ուղեկցել է հայերին և եղել է ՀՀ պետական քաղաքականության ուշադրության կենտրոնում: Հայկական իրականության մեջ, սակայն, միգրացիայի և միգրացիոն խնդիրների մասին խոսելիս, հիմնականում անդրադառնում են արտագաղթին, քանի որ Հայաստանը դասվում է արտագաղթի երկրների շարքին, կամ, ինչպես Heidenreich-ն ու մյուսներն են (2020) տարանջատում իրենց հոդվածում՝ «չընդունող» երկրների շարքին, որտեղ արտագաղթը գերակշռում է ներգաղթը:

2017 թվականի փետրվարին 9-ին ՀՀ կառավարությունն ընդունեց որոշում4, որի համաձայն փոփոխվեց Հնդկաստանի և Իրաքի քաղաքացիների մուտքի վիզայի տրամադրման կարգը. այս երկու պետությունների քաղաքացիները կարող են ՀՀ մուտքի վիզայի համար դիմել օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ և հյուպատոսական հիմնարկներ նաև առանց հրավերի, մինչդեռ նախկինում հրավերի առկայությունը պարտադիր էր ՀՀ մուտքի վիզայի տրամադրման համար: Նույն տարվա նոյեմբերի 16-ին կայացած ՀՀ ազգային ժողովի նիստում քննարկվեց, ապա հաստատվեց մի նոր կարգ[5], որի համաձայն Հնդկաստանի քաղաքացիները ՀՀ մուտքի վիզա կարող են ստանալ ինչպես ՀՀ դեսպանություններում, այնպես էլ սահմանային անցակետերում կամ էլեկտրոնային վիզայի (E-Visa) համակարգի միջոցով:

Վիզային ռեժիմի այս փոփոխությունների իրականացմանը հաջորդող երկու տարիների ընթացքում կարելի է նկատել Հնդկաստանից դեպի Հայաստան ներհոսքի կտրուկ աճ (տե՛ս Աղյուսակ 1): Ավելին, 2018 թվականի Հնդկաստանի քաղաքացիների սալդոն դրական է և 10 անգամ ավել 2017 թվականի դրական սալդոյից (տե՛ս Աղյուսակ 2): Հնդկաստանի քաղաքացիների մուտքերը Հայաստան

---

[4] ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N 329-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=111526

[5] ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N 329-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117361

շարունակում են աճել նաև 2019 թվականի ընթացքում, սակայն դիտարկված վերջին 5 տարիների տվյալների հետ համեմատած 2019 թվականը միակ տարին է, որն արձանագրել է Հնդկաստանի քաղաքացիների բացասական սալդո:

Գծապատկեր 2. Հնդկաստանի քաղաքացիների մուտքերն ու ելքերը ՀՀ (2015-2019 թթ.)[6]



Գծապատկեր 3. ՀՀ ժամանող Հնդկաստանի քաղաքացիների միգրացիոն սալդոն (2015-2019թթ.)[7]



[6] «Սահմանահատումների քանակը 2019 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»: հասանելի է՝ http://migration.am/content/pdf/2019_border_ARM_0.pdf
«Սահմանահատումների քանակը 2018 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»: հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2018.pdf
«Սահմանահատումների քանակը 2017 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»: հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2017.pdf
«Սահմանահատումների քանակը 2016 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»: հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2016.pdf
«Սահմանահատումների քանակը 2015 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների»: հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2015.pdf

[7] նախորդ նույն աղբյուրներն են

Հնդկաստանի քաղաքացիների հոսքի ավելացմանն ի պատասխան, հայկական մեդիադաշտում իմիգրանտների մասին ձևավորվեցին տարբեր խոսույթներ: Ավելին, 2019 թվականի հունվար ամսին քաղաքական գործիչ և «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության անդամ Սարգիս Տեր-Եսայանը օնլայն հարթակում[8] նախաձեռնեց ստորագրահավաք՝ ուղղված հնդիկների և պակիստանցիների՝ ՀՀ մուտքի արգելմանը: Այս ստորագրահավաքը նոր թափ հաղորդեց մեդիադաշտում իմիգրացիայի, մասնավորապես հնդիկների ներգաղթի մասին քննարկումների և նորությունների ավելացմանը: Սրա մասին է փաստում ուսումնասիրված հոդվածների ամսական բաշխվածությունը. ուսումնասիրված ժամանակահատվածում հնդիկ և իրանցի իմիգրանտներին անդրադարձող հոդվածներն ամենաշատը հանդիպում են 2019 թվականի հունվար ամսին, որն ուսումնասիրված ընդհանուր հոդվածների 16%-ն է, իսկ 2019 թվականի ուսումնասիրված հոդվածների՝ 23.5%-ը (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. ՀՀ իմիգրացիային անդրադարձող հոդվածների դինամիկան ըստ ամիսների



Ամիս	2018	2019
Հունվար	5	20
Փետրվար	2	9
Մարտ	6	3
Ապրիլ	9	4
Մայիս	2	3
Հունիս	4	3
Հուլիս	0	6
Օգոստոս	2	5
Սեպտեմբեր	1	10
Հոկտեմբեր	3	4
Նոյեմբեր	6	14
Դեկտեմբեր	0	4
Ընդհանուր	**40**	**85**

[8] Ստորագրահավաքն իրականացվում էր change.org կայքում, որը, սակայն, նախաձեռնությունից 4 օր անց՝ հունվարի 8-ին, արգելափակեց ստորագրահավաքը՝ կայքում ռասայական, էթնիկ, կրոնական խտրականության և ատելության խոսքի տարածման բացառման սկզբունքից ելնելով:

2019 թվականի հունվարին իմիգրանտների, մասնավորապես հնդիկների շուրջ հանրության և մեդիադաշտի հետաքրքրության ավելացման մասին է վկայում նաև ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պաշտոնական կայքի ուսումնասիրությունը: 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում կարելի է առանձնացել ընդհանուր 5 հոդված[9], որոնք անմիջականորեն ուղղված են Հնդկաստանի քաղաքացիների հոսքին Հայաստան: Բոլոր հինգ հոդվածները հրապարակված են 2019 թվականի հունվար ամսին: Եթե Միգրացիոն ծառայության 2018 թվականին հրապարակած նորություններում հիմնական անդրադարձերը վերաբերում էին Հայաստանից արտագաղթին, իսկ ներգաղթի մասին նյութերը ազգությամբ հայ իմիգրանտների մասին էին, ապա 2019 թվականի հունվարից սկսած կարելի է նկատել պարբերաբար անդրադարձեր դեպի Հայաստան օտարազգիների իմիգրացիային: Միգրացիոն ծառայության անդրադարձերի բովանդակության ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ, ըստ էության, դրանք արձագանք են իմիգրանտների շուրջ ծավալված խոսույթներին և ունեն ավելի շատ պարզաբանող բնույթ:

[9] «Ինչո՞ւ են Հայաստանում շատանում հնդիկները. պատկան կառույցների մեկնաբանությունը», հոդված ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պաշտոնական կայքում, 09.01.2019 թ.
հասանելի է՝ http://migration.am/news/143
«Դավթյան. «Հնդկաստանի քաղաքացիների այցերի ավելացումը պայմանավորված է վիզայի պարզեցմամբ»», հոդված ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պաշտոնական կայքում, 09.01.2019 թ.
հասանելի է՝ http://migration.am/news/141
«Միգրացիայի հնդկական թնջուկը. նոր հնարավորություն տնտեսության համա՞ր, թե՞ մարտահրավեր աշխատաշուկային», հոդված ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պաշտոնական կայքում, 11.01.2019 թ.
Հասանելի է՝ http://migration.am/news/137
«Հնդիկները Հայաստանում. ավանդական մեդիան թափ հաղորդեց սոցմեդիայի քննարկումներին», հոդված ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պաշտոնական կայքում, 16.01.2019 թ.
հասանելի է՝ http://migration.am/news/134
«Ու կրկին քննարկման առանցքում հնդկաստանի քաղաքացիներն են», հոդված ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պաշտոնական կայքում, 29.01.2019 թ.
հասանելի է՝http://migration.am/news/123

Իմիգրանտները հայկական օնլայն մեդիադաշտում

Իմիգրացիոն խոսույթներ և պատումներ

Մեդիադաշտում միգրացիոն գործընթացների և միգրանտների ներկայացման վերաբերյալ միջազգային հետազոտական գրականության ուսումնասիրության արդյունքում դուրս բերված խոսույթները կարող ենք պայմանականորեն տարանջատել հետևյալ ուղղությունների՝

- աշխատաշուկայի ապակայունացման/տնտեսական սպառնալիքի խոսույթ,
- մշակութային և ինքնության սպառնալիքի խոսույթ,
- ֆիզիկական անվտանգության սպառնալիքի խոսույթ,
- հումանիստական խոսույթ։

Հասկանալու համար հայկական օնլայն մեդիադաշտում իմիգրանտների վերաբերյալ ընդհանուր տրամադրվածությունն ու ձևավորվող պատումները՝ դուրս են բերվել և կոդավորվել իմիգրանտների մասին հոդվածների բովանդակությունները։ Արդյունքում տեսնում ենք, որ հայկական օնլայն մեդիայում ամենահաճախ հանդիպող պատումները վերաբերում են ՀՀ սահմանը հատած իմիգրանտների կողմից իրականացված հանցագործություններին և ապօրինի գործարքներին. վերլուծված 125 հոդվածից 33-ը (26.4%-ը) անդրադառնում են իմիգրանտների կողմից կատարված հանցագործություններին (տե՛ս Աղյուսակ 1)։ Այս բովանդակությամբ 33 հոդվածից 20-ը իրանցիների մասին է, ովքեր լրատվամիջոցներում հիմնականում հանդես են գալիս իբրև մաքսանենգեր և թմրանյութեր ներմուծողներ։ Հնդիկների կողմից կատարվող հանցագործություններն այլ բնույթ են կրում.կիբերհանցագործություն, կեղծ գումարների շրջանառություն և այլն։

Երկրորդ ամենահաճախ հանդիպող բովանդակությունները երկուսն են՝ ընդդիմադիր և/կամ նախկին քաղաքական գործիչների անդրադարձերն իմիգրացիոն հոսքերի կառավարմանն ու դրանց ավելացման հետևանքներին և իմիգրանտների աշխատանքային շահագործումը։ Երկու դեպքում էլ բոլոր հոդվածները վերաբերում են հնդիկներին, ինչը ևս մեկ անգամ վկայում է այն մասին,

որ իմիգրանտների շուրջ ծավալվող խոսույթները, ըստ էության, հնդիկների շուրջ ծավալվող խոսույթներն են: Ավելին, պետական կառույցների անդրադարձերը իմիգրացիային նույնպես ամբողջությամբ վերաբերում է հնդիկներին (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 2-ում ներկայացված են այն հատկանիշները և դրանց հանդիպման հաճախականությունները, որոնք վերագրվում են հնդիկներին ուսումնասիրված տեքստերում: Ստացված հիման վրա կարող ենք ասել, որ հիմնական որակավորումներն ուղղված են հնդիկների ժամանումների քանակին և ՀՀ նրանց այցելությունների շեշտադրումներին (տե՛ս Աղյուսակ 2):

Համադրելով ուսումնասիրոված նյութերի բովանդակությունն ու հնդիկներին վերագրվող որակավորումները՝ կարող ենք ասել, որ, թեպետ հնդիկներին վերագրվող հատկանիշները հիմնականում չեզոք են, սակայն դիտարկված նյութերի զգալի մասն իրենց թեմատիկ ուղղվածությամբ ունեն անուղղակի բացասական բնույթ. օտարազգի իմիգրանտներին անդրադարձերը հիմնականում կատարվում են բացասական երանգ ունեցող թեմաների շրջանակներում՝ հանցագործություն, ծեծկռտուք, աշխատանքային շուկայի խնդիրներ, աշխատանքային շահագործում, դժբախտ պատահարներ և այլն (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ուսումնասիրված նյութերի բովանդակությունը

	Ընդհանուր	Հնդիկ	Իրանցի	Այլ
Հանցագործության, ապօրինի գործարքների մեջ ներգրավված/մեղադրվող իմիգրանտներ	33	12	20	1
Ընդդիմադիր և նախկին քաղաքական գործիչների անդրադարձ իմիգրանտներին	10	10		
Իմիգրանտների աշխատանքային շահագործում	10	10		
Վիճաբանություն, ծեծկռտուք	9	7	2	
Օտարազգիների և ռասիզմի մասին	9	6	3	
ՀՀ աշխատաշուկան և իմիգրանտները	8	8		
Դժբախտ պատահարներ օտարազգիների հետ	8		5	3

ՀՀ սահմանի ապօրինի հատում	7		6	1
Ավտովթար օտարազգիների մասնակցությամբ	6	3	3	
Պետական կառույցների անդրադարձ իմիգրացիային և իմիգրանտներին	6	6		
Օտարերկրկացիների մասին օրենքների քննարկում	4		1	3
ՀՀ-ում իմիգրանտների աճի և վիզային ռեժիմի փոփոխություն	4	3		1
Կրթական համակարգն ու օտարազգի ուսանողները	4	4		
Շոու բիզնեսի ներկայացուցիչների անդրադարձը իմիգրանտներին	3	3		
Աշխարհում միգրանտների թվի աճի մասին	1			1
ՀՀ-ում բնակվող հնդիկի հետ հարցազրույց	1	1		
Իրանցիների բողոքի ակցիան ի աջակցություն Իրանին	1		1	
Իմիգրացիայի հետ կապ չունեցող, բայց այն շահարկող նյութ	1	1		

Աղյուսակ 2. Հոդվածներում հնդիկներին վերագրվող որակավորումները

Վերագրվող որակավորումները	Հանդիպման հաճախականություն
x քանակի հնդիկ	20
ՀՀ եկող, այցելող	14
Կացության կարգավիճակ ստացած	10
ՀՀ-ում դժվար կացության մեջ հայտնված, խնդիրների բախված	9
Հետախուզվող	8
ՀՀ-ում բնակվող	5
Էժան աշխատուժ հանդիսացող	3
Խարեությամբ ՀՀ-ում հայտնված	3
Երիտասարդ	3
Խարեբաներ	2
Աշխատող	2
Բերման ենթարկված	2
Սահմանախախտ	2
Անվճարունակ ու աղքատ	2

Ուսումնասիրված հոդվածներում կարելի է նկատել 2 դոմինանտ խոսույթ՝ ազգային անվտանգության և աշխատանքային շուկայի անկայունության սպառնալիքի խոսույթները: Միևնույն հոդվածում կարելի է նկատել միաժամանակ մեկից ավելի խոսույթի առկայություն: Օրինակ, ՀՀ աշխատաշուկայի և իմիգրանտների մասին հոդվածներում կարելի է նկատել ոչ միայն աշխատաշուկայի, այլ նաև մշակութային և ֆիզիկական սպառնալիքի վերաբերյալ խոսույթները: Ընդ որում, հայկական իրականության մեջ մշակութային ու ինքնության սպառնալիքի և ֆիզիկական սպառնալիքի մասին խոսույթները հաճախ փոխկապված են հանդես գալիս: Ի տարբերություն եվրոպական երկրների մեդիաներում առկա ֆիզիկական սպառնալիքի խոսույթին, որը վերաբերում է ահաբեկչություններին և փախստականների անվան տակ ահաբեկիչների ներթափանցման վտանգին՝ ուսումնասիրված լրատվամիջոցներում ֆիզիկական սպառնալիքի խոսույթը կապված է այլ մշակույթ կրող անձանց ներհոսքի արդյունքում հայ ժողովրդի մշակութային և ժողովրդագրական պատկերի փոփոխության սպառնալիքների հետ: Վերջինս կարելի է դիտարկել ստորև բերված հատվածում՝

««Ազգային օրակարգ» կուսակցությունը համարում է, որ ՀՀ Կառավարության 2017 թ. նոյեմբերի որոշումը՝ միակողմանիորեն պարզեցնելու Հնդկաստանի քաղաքացիների մուտքը Հայաստան, հիմնավորված չէր, և Հնդկաստանից տեղի ունեցող հսկայական միգրացիոն հոսքերի ֆոնի վրա, կարող է հանգեցնել Հայաստանում անցանկալի դեմոգրաֆիական զարգացումների, և դրանից բխող բազմաթիվ անկանխատեսելի խնդիրների: Հայաստանի Հանրապետությունը պետք է վերահսկի միգրացիոն հոսքերը բոլոր բարձր աղքատություն ունեցող երկրներից, և այստեղ Հնդկաստանն էլ բացառություն չպետք է կազմի… վերջին տարիներին Հնդկաստանից տարեկան արտագաղթում է մոտ 3 միլիոն մարդ (Հայաստանի ամբողջ բնակչության չափ), ընդ որում դրանց մեջ մեծ տոկոս են կազմում երկրի

իսլամ դավանող քաղաքացիները (մոտ 27%)»[10]:

«Հնդկաստանից տեղի ունեցող հսկայական միգրացիոն հոսքեր» և «անցանկալի դեմոգրաֆիական զարգացումներ» արտահայտությունները ուղղակի կապ են ստեղծում իմիգրանտների ներթափանցման և ժողովրդագրական անցանկալի զարգացումների միջև: Հայ ազգին «սպառնացող» ժողովրդագրական անցանկալի հետևանքների մասին խոսույթն ամրապնդվում է հոդվածի շարունակության մեջ բերված թվերով, որտեղ մատնացույց է արվում Հնդկաստանի բնակչության քանակի ծավալն ու արտագաղթողների ծավալը: Վերջինիս թիվը ճիշտ այնքան է, որքան ՀՀ ամբողջ բնակչությունը, ինչը նույնպես յուրահատուկ «ահազանգ» է հայ հասարակության ժողովրդագրական փոփոխության և ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի համար:

Միևնույն ժամանակ, բերված օրինակում կարելի է նկատել նաև աշխատաշուկայի սպառնալիքի խոսույթը, որի մասին խոսում է «բարձր աղքատություն ունեցող երկրներից» ներհոսքի վերահսկման անհրաժեշտության շեշտադրումը: Աշխատաշուկայի և տնտեսական սպառնալիքի խոսույթը երբեմն նույնպես կապվում է ժողովրդագրական և ազգային անվտանգության խոսույթին հետևյալ տրամաբանությամբ. աղքատ երկրներից ժամանող իմիգրանտները, լինելով էժան աշխատուժ, հայերին դուրս են մղում հայաստանյան աշխատաշուկայից՝ նպաստելով գործազրկության աճին, ինչն էլ իր հերթին խթանում է հայերի արտագաղթը: Ստացվում է, որ մեծ բնակչություն ունեցող երկրից իմիգրացիոն հոսք է ներթափանցում Հայաստան՝ այստեղից դուրս մղելով հայերին:

Հայ-ուկրաինական բարեկամության խորհրդի անդամ, անդրադառնալով դեպի ՀՀ իմիգրացիային, նշում է.

> *«Ոմանք կասեն, որ առանց վիզայի ելումուտը կխթանի Հնդկաստանի հետ տուրիզմի զարգացմանը, սակայն դա այդպես չի. այն հնդիկները, որոնք սոցիալապես բարվոք վիճակում են գտնվում ու որպես տուրիստ գնում են այլ*

[10] ««Ազգային օրակարգ» կուսակցության հայտարարությունը Հնդկաստանի քաղաքացիների ներգաղթի վերաբերյալ», հոդված 1in.am էլեկտրոնային թերթում, 09.01.2019 թ., հասանելի է՝ https://www.1in.am/2488062.html

երկրներ, ի վիճակի են վճարել վիզայի համար, այսինքն նրանց Հայաստանի հետ առանց վիզայի ռեժիմ իրականում հարկավոր չի, իսկ այսպես մեր երկիր են լցվում անվճարունակ և աղքատ հնդիկները, որոնք ոչ թե տուրիստ են, այլ միգրանտ, որոնց մի մասը, որպես անլեգալ միգրանտ, Հայաստանից կգնա Եվրոպա, իսկ մի մասն ընդմիշտ կմնա Հայաստանում, որի հետևանքներն ուղղակի աղետալի կլինեն նախ դեմոգրաֆիական առումով, և երկրորդ՝ նրանք որպես էժան աշխատուժ կսկսեն հայերին դուրս մղել առանց այն էլ խիստ փոքր հայաստանյան աշխատաշուկայից, ու որպես արդյունք Հայաստանում գործազրկությունն առանց այն էլ խայտառակ 20%-ից կհասնի աստված գիտի թե ուր»[11]:

Հոդվածում հեղինակը շեշտադրում է ժողովրդագրական խնդիրը, որը Հայաստանն, իր ենթադրությամբ, կունենա հնդիկների ներհոսքի արդյունքում և աշխատաշուկայի խնդիրը, որն, ինչպես ինքն է նշում «առանց այն էլ խիստ փոքր է»: Արդյունքում, հեղինակը հանգում է նրան, որ այս ներհոսքը կբերի գործազրկության աճին, որն «առանց այն էլ խայտառակ 20%» է:

Հոդվածներում կարող է առկա լինել տնտեսական սպառնալիքի, առողջապահական սպառնալիքի և այլ խոսույթներ, սակայն այս բոլոր խոսույթներն ի վերջո հիմնականում կապվում են ազգային անվտանգության, ազգային դիմագծի և ֆիզիկական ոչնչացման սպառնալիքների մասին խոսույթի հետ: Անվտանգության այս խոսույթը կարելի է նկատել նույնիսկ այն հոդվածներում, որոնք կարծես թե դրական են անդրադառնում իմիգրացիոն հոսքին, սակայն, դրանով հանդերձ, զերծ չեն մնում անվտանգության հարցի քննարկումից:

«Ասածս այն է, որ անհանգստանում եք, թե մեր երկիրը կգրավեն, կբազմանան, ձեզ տեղ չի մնա՞, դուք բազմացեք, դուք գրավեք, տեղ մի թողեք ուրիշների համար»[12]:

---

[11] ««Մեր երկիր են լցվում անվճարունակ և աղքատ հնդիկները, որոնք ոչ թե տուրիստ են, այլ միգրանտ». Թ. Ալեքսանյան», հոդված mamul.am էլեկտրոնային թերթում, 02.02.2019 թ., հասանելի է՝ https://mamul.am/am/news/140954

[12] ««Սրանում վատ բան չկա». Կարինե Հարությունյան», հոդված mamul.am էլեկտրոնային թերթում, 10.01.2019 թ., հասանելի է՝ https://mamul.am/am/news/141318

Նշված հատվածը մի հոդվածից է, որտեղ հեղինակը, դրական անդրադառնալով իմիգրացիոն հոսքերին՝ միևնույնն է շեշտադրում է անվտանգության խոսույթը. նա չի հերքում վտանգի առկայությունը, բայց, իմիգրանտներին մերժելուն և վատ վերաբերվելուն այլընտրանք է առաջարկում:

Իմիգրացիան՝ իբրև քաղաքական դաշտում դիրքավորվելու միջոց

Աձանձնացված 5 էլեկտրոնային մամուլն ուսումնասիրելիս՝ կարելի է նկատել, որ աշխատաշուկայի և անվտանգության վերաբերյալ խոսույթներն առկա են պետական քաղաքականության քննադատության, միգրացիոն ռազմավարության բացթողումների վերաբերյալ ծավալվող քննարկումների համատեքստում: Պետության՝ իբրև իմիգրանտների կողմից վտանգված կառույցի ներկայացումը քաղաքական պատում է, որն ակտիվանում և օգտագործվում է քաղաքական «խաղերի» համար, որով քաղաքական մի գործիչն իրեն տարբերակում է մյուս քաղաքական գործիչներից: Սա սոցիալական կառուցակցում է, որը քաղաքականացնում է միգրացիան (Bigo, 2002):

> *«Երևանի քաղաքապետարանը, եթե ազնիվ գտնվեր, պետք է նախապես տեղեկացներ «Սանիթեքին», որ պատրաստվում է լուծարել ընկերության հետ կնքված պայմանագիրը: Այս մասին այսօր՝ սեպտեմբերի 10–ին քաղաքապետարանի շենքի դիմաց լրագրողների հետ զրույցում հայտարարեց Երևանի ավագանու նախկին անդամ Սոնա Աղեկյանը՝ անդրադառնալով ընկերության աշխատակիցների դժգոհություններին:*
>
> *«Քաղաքապետարանը, առանց լուծարելու պայմանագիրը, մեր հանրային միջոցներից գումարներ է տրամադրում «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» հիմնարկին, որի աշխատողները հնդիկներ են: Դուք կարող եք ասել, որ ես ազգայնական եմ, բայց ոչ, ես հայրենասեր եմ և ուզում եմ, որ մեր հարկատուների գումարները, որպես աշխատավարձ*

տրամադրվեն մեր աշխատակիցներին՝ ՀՀ քաղաքացիներին»,–ասաց նա»[13]:

Հայաստանում 2018 թվականի Թավշյա հեղափոխության արդյունքում տեղի ունեցավ իշխանափոխություն, որի արդյունքում ընդդիմադիր ու իշխող կուսակցությունները փոխվեցին դերերով: Միևնույն ժամանակ, Հնդկաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմի քաղաքականության դյուրացումը տեղի էր ունեցել 2017 թվականի նոյեմբերի 16-ին ընդունված օրինագծով, որի արդյունքները սկսեցին երևալ արդեն 2018 թվականի ընթացքում: Հնդկաստանի քաղաքացիների հոսքի ավելացումը համընկավ իշխանափոխության հետ և սկսեց շահարկվել մի շարք քաղաքական գործիչների կողմից իրենց՝ իշխանության եկած քաղաքական գործիչներից տարբերակելու և նոր իշխանությանը քննադատելու համար: Վերոհիշյալ հոդվածում քաղաքական գործիչն «հայրենասեր» դիրքավորվելով՝ իրեն հակադրում է նոր իշխանություններին: Չնայած այն հանգամանքին, որ վիզայի ստացման կարգի փոփոխությունը տեղի էր ունեցել նախորդ իշխանական ուժերի կառավարման օրոք, սակայն Հնդկաստանի հետ վիզային ռեժիմի դյուրացումն ու միգրացիոն լայն հոսքի ներթափանցումը շահարկվում է գործող իշխանության մասին խոսելիս և քննադատելիս:

> *«….Քանի որ Հայաստանում պառլամենտը ապաքաղաքական մարմին է դարձել, ի տարբերություն նախկին կոռումպացված, բայց այնուամենայնիվ քաղաքական կառույցի, ապա տարբեր խնդիրների վերաբերյալ հանրային կարծիքը բրոունյան շարժման է վերածվել: Հնդիկների պահով՝ նացիոնալիզմը և շովինիզմը վատ երևույթներ են և հնդիկների ու մյուս ազգությունների հանդեպ պետք է հանդուրժող լինել, բայց դա չի նշանակում, որ պետությունը իմիգրացիոն քաղաքականություն չպետք է վարի և չպետք է կարգավորի ու քվոտավորի ներգաղթը: Այդ երկու երևույթները՝ քսենոֆոբիան ու չկարգավորվող միգրացիան, հավասարապես բացասական*

[13] ««Քաղաքապետարանը գումարներ է տրամադրում մի հիմնարկի, որի աշխատողները հնդիկներ են». Սոնա Աղեկյան», հոդված news.am էլեկտրոնային թերթում, 10.09.2019 թ., հասանելի է՝ https://news.am/arm/news/532708.html

երևույթներ են»[14]*:*

Հեղինակը, խոսելով դեպի Հայաստան հնդիկների ներհոսքի մասին, շեշտադրում է ոչ թե բուն միգրացիան, այլ նոր ղեկավարության գործունեությունը, մասնավորապես պետության իմիգրացիոն քաղաքականությունը:

Արդարադատության նախկին նախարար և Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) նախկին անդամը հետևյալ կերպ է անդրադառնում դեպի Հայաստան հնդիկների ներգաղթին և նրանց շուրջ ծավալված քննարկումներին.

> *«Գուցե և հնդիկներն էլ են անհրաժեշտ, և ոչ միայն, սակայն պետական շահերի տեսանկյունից ժողովրդագրական զարգացումները պետք է թելադրված լինեն հստակ կանխատեսելի ռազմավարությամբ, հանգեցնեն շահեկան իրավիճակների (օրինակ՝ ՈՂՋԱՄԻՏ շրջանակով հնդիկների համայնքի փաստն ինքնին հսկայական դերակատարում կարող է ունենալ Հնդկաստանի հետ հիրավի բարիդրացիական, և ոչ թե զուտ չոր ձևական դիվանագիտական հարաբերություններ ձևավորելու համար), այդ թվում՝ հայ համայնքի ընդունելի կարգավիճակի երաշխավորմանը»*[15]*:*

Վերոհիշյալ գրառման մեջ հեղինակը, խոսելով հնդիկների թվաքանակի մասին, շեշտադրում է ողջամիտ բառը, ինչն ընթերցողին թույլ է տալիս ենթադրել, որ հնդիկների այն ներկայիս հոսքը ողջամիտ չէ և նույնիսկ սպառնում է հայերի ֆիզիկական գոյությանը, ինչը շեշտադրվում է «պետական շահերի տեսանկյունից ժողովրդագրական զարգացումներ» արտահայտությամբ: Ավելին՝ վերջինս «հուշում» է ընթերցողին, որ գոյություն ունեցող իմիգրացիոն քաղաքականությունը չի բխում պետական շահերի տեսանկյունից և անկանխատեսելի է: Հետևելով Մարգարյանի (2020) կողմից մշակված շահարկումների (մանիպուլյացիաների) մասին ուղեցույցին՝ կարող ենք ասել, որ հեղինակն իր տեքստում կիրառել է երկու շահարկման ձև՝ «բացարձակ արտահայտությունների և բառերի» («ողջամիտ» բառի

---

[14] «Հնդիկների հանդեպ պետք է հանդուրժող լինել, բայց պետք է քվոտավորել ներգաղթը. Ստեփան Դանիելյան», հոդված 1in.am էլեկտրոնային թերթում, 08.01.2019 հասանելի է՝ https://www.1in.am/2487380.html

[15] ««Գուցե եւ հնդիկներն էլ են անհրաժեշտ, բայց...». Գեւորգ Դանիելյանի գրառումը», հոդված lurer.com էլեկտրոնային թերթում, 25.11.2019 թ,, հասանելի է՝ https://lurer.com/?p=345596&l=am

շեշտադրում) ու «առանց փաստի պնդումների և դատողությունների» օգտագործում: Վերջինս վերաբերում է «պետական շահերի տեսանկյունից ժողովրդագրական զարգացումները պետք է թելադրված լինեն հստակ կանխատեսելի ռազմավարությամբ, հանգեցնեն շահեկան իրավիճակների» և «զուտ չոր ձևական դիվանագիտական հարաբերություններ ձևավորել» արտահայտություններին, քանզի հեղինակը չի հստակեցնում և չի հիմնավորում, թե որն է «կանխատեսելի ռազմավարությունը», որը կհանգեցնի «շահեկան իրավիճակի», որն է «շահեկան իրավիճակը» Հայաստանի համար, որ չափանիշներով է տարանջատում «չոր դիվանագիտական հարաբերությունը» :բարիդրացիական հարաբերություններից» և ինչի հիման վրա է անում պնդումն այն մասին, որ ներկայիս դիվանագիտական հարաբերությունները «չոր» են:

Վերոհիշյալ օրինակները ցույց են տալիս, որ ուսումնասիրված լրատվամիջոցներում քաղաքական գործիչների կողմից իմիգրացիան հաճակ կառուցակցվում է իբրև պետականության շահերին սպառնալիք հանդիսացող երևույթի: Ավելին՝ իմիգրացիայի նման կառուցակցումը հայկական քաղաքական գործիչներին հնարավորություն է ընձեռում իրենց իբրև հայրենասեր և պետականամետ գործիչներ դիրքավորելու քաղաքական դաշտում:

Իմիգրանտների վիզուալիզացիան հայկական մեդիադաշտում

Մեդիադաշտում տեղեկատվության տարածումը տեղի է ունենում ինչպես վերբալ, այնպես էլ վիզուալ եղանակներով: Վերջինս նույնպես իր ազդեցությունն է ունենում կերպարների, տարբեր երևույթների մասին խոսույթների ձևավորման վրա. վիզուալ գործիքները կարող են ինչպես «դեմք տալ», այնպես էլ անդեմ դարձնել նյութի «հերոսներին»՝ հանրության շրջանում տվյալ խմբի նկատմամբ առաջացնելով ամենատարբեր զգացողությունները (Chavez 2001; Bleiker et al., 2013): Ուսումնասիրված հոդվածների միայն 19,2%-ն է նյութը ներկայացնում միայն վերբալ եղանակով՝ առանց ուղեկցող նկարի: Հոդվածների 80,8%-ն ունեն ուղեկցող նկարներ: Նկարների ուսումնասիրությունները թույլ է տալիս ասել, որ իմիգրանտները ուսումնասիրված լրատվամիջոցներում հիմնականում «անդեմ» են

պատկերվում. նկարների 75,3%-ն «անդեմ»[16] (տե՛ս Գծապատկեր 6)։

Գծապատկեր 5. Նկարների առկայությունը ուսումնասիրված հոդվածներում



Իմիգրանտների մասին նյութերն ուղեկցող «անդեմ» նկարները իրենցից հիմնականում ներկայացնում են տվյալ նյութի հետ ասոցացվող իրերի, իրավիճակների պատկերներ։ Օրինակ, *«Արտակարգ դեպք Երևանում. «Սթար» բար-սրճարանում հնդիկների վիճաբանություն-ծեծկռտուքն ավարտվել է կրակոցներով»*[17] վերնագիրը կրող հոդվածն ուղեկցվում է ատրճանակի նկարով (տե՛ս Նկար 1)։



«Վիճաբանություն Երևանում՝ Իրանի քաղաքացիների և տեղի բնակիչների միջև»[18] հոդվածն ուղեկցվում է խմբակային ծեծկռտուքի նկարով, որտեղ, չի երևում

[16] Տվյալ ուսումնասիրության շրջանակներում «անդեմ» են համարվում այն նկարները, որտեղ չկան պատկերված առանձին անհատներ, անհատների փոքր խմբեր, ում դիմագծերը կարելի է հստակ տեսնել, տարբերակել։

[17] «Արտակարգ դեպք Երևանում. «Սթար» բար-սրճարանում հնդիկների վիճաբանություն-ծեծկռտուքն ավարտվել է կրակոցներով», հոդված news.am էլեկտրոնային թերթում, 24.11.2019 թ., հասանելի է՝ https://news.am/arm/news/546115.html

[18] «Վիճաբանություն Երևանում՝ Իրանի քաղաքացիների և տեղի բնակիչների միջև», հոդված 1in.am էլեկտրոնային թերթում, 15.01.2018 թ., հասանելի է՝ https://www.1in.am/2278640.html

մասնակիցների դեմքը (տե՛ս Նկար 2)։

Նման նկարների առկայությունը նպաստում է ՀՀ ժամանող իմիգրանտների՝ իբրև սպառնալիքի, վերբալ խոսույթի վիզուալ ամրապնդմանը։ Bleiker-ն ու մյուսները (2013) նշում են, որ դիմավոր նկարների առկայությունը կարևոր է ընդունող հասարակության շրջանում իմիգրանտների նկատմամբ էմպատիայի առաջացման համար։ Ընտրված լրատվամիջոցների ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ, թեպետ դիմավոր նկարներն իմիգրանտներին տարատեսակ «սպառնալիքներից» վերածում են տեսանելի մարդու, սակայն դրական կամ բացասական դիրքորոշումների և զգացողությունների տեսանկյունից կարևոր է նաև այն խոսույթը, որին ուղեկցում է նկարը։ Օրինակ, *«Հնդիկները՝ էժան աշխատուժ, հայերը՝ գործազուրկ»*[19] վերնագիրը կրող հոդվածը, որտեղ առկա է հնդիկների՝ իբրև էժան աշխատուժի և հայերի համար տնտեսական սպառնալիքի խոսույթը, ուղեկցվում է աշխատանքի մեջ գտնվող երկու հնդիկների նկարով (տե՛ս Նկար 3)։

Նկար 3

[19] «Հնդիկները՝ էժան աշխատուժ, հայերը՝ գործազուրկ. «Ժողովուրդ»», հոդված 1in.am էլեկտրոնային թերթում, 11.09.2019 թ., հասանելի է՝ https://www.1in.am/2622434.html

Այս պարագայում, տեղի է ունենում խոսույթի վիզուալիզացում և, կարծես թե հնդիկների՝ հայկական աշխատաշուկայում ներգրավվածության և դրանով աշխատաշուկայի ապակայունացման սպառնալիքի փաստարկում: *Միևնույն ժամանակ, «Խաբեությամբ Հայաստանում հայտնված 4 հնդիկները վերադարձել են Հնդկաստան. մեղավորները Փենջաբում ձերբակալվել են»*[20] վերնագիրը կրող հոդվածն ուղեկցվում է հնդիկի նկարով, ով գտնվում է վատ պայմաններով սենյակում (տե՛ս Նկար 4): Մի կողմից, նկարը խաբեության զոհ դարձած մարդու դժվար վիճակը վիզուալիզացնող գործիք է, սակայն, մյուս կողմից, հնդիկների մասին գոյություն ունեցող այնպիսի կարծրատիպերի ամրապնդում է, ինչպիսիք են փնթիությունը, վատ պայմաններում ապրող և ցածր վարձատվությամբ աշխատելու պատրաստակամությունը:

Նկար 4

Տվյալ ուսումնասիրության հետազոտական խնդիրներից դուրս է հանրության շրջանում վիզուալիզացման ազդեցության և ընկալման բացահայտումը, քանի որ հետազոտությունն ուղղված է մեդիադաշտում իմիգրանտների ներկայացվածության ուսումնասիրությանը, սակայն, կարևոր է հաշվի առնել վիզուալիզացման ոչ միանշանակ ընկալման հավանականությունը, որը խորքային ուսումնասիրության կարիք ունի:

[20] «Խաբեությամբ Հայաստանում հայտնված 4 հնդիկները վերադարձել են Հնդկաստան. մեղավորները Փենջաբում ձերբակալվել են», հոդված lurer.com էլեկտրոնային թերթում, 09.02.2019 թ., հասանելի է՝ https://lurer.com/?p=312012&l=am

Իմիգրանտների ձայնն ու հայկական մեդիադաշտը

Վերջին շրջանում մեդիադաշտում իմիգրանտներին կատարած անդրադարձերի ուսումնասիրություններում ակտուալ է դիմավոր և մարդակենտրոն մոտեցման քննարկումները, որն ուղղված է իմիգրանտներին դեմք տալուն և ձայնը լսելի դարձնելուն:

Ուսումնասիրված լրատվամիջոցներում իմիգրանտների մասին տեղ գտած հոդվածները, կարելի է ասել, զուրկ են իմիգրանտների ձայնից. ուսումնասիրված 125 հոդվածից միայն 5 հոդվածում կարելի է տեսնել իմիգրանտի ձայնի ներկայացվածությունը (տե՛ս Նկար 5), որն արտահայտված է իմիգրանտի հետ իրականացված հարցազրույցի ներկայացմամբ, ուղիղ խոսքի մեջբերմամբ: Բոլոր հինգ հոդվածները կարելի է համարել դիմավոր ինչպես վերբալ, այնպես էլ վիզուալ տեսանկյունից, քանի որ դրանք ուղեկցվում են իմիգրանտների անհատական նկարներով: Ուսումնասիրված հոդվածների 96%-ը (120 հոդված), սակայն, զուրկ են իմիգրանտների ձայնից և ավելի հաճախ ներկայացնում են քաղաքական գործիչների, հանրային կերպարների կարծիքը և դիրքորոշումը ՀՀ-ում իմիգրացիոն գործընթացների վերաբերյալ: Ավելին, հաճախ հայկական մեդիադաշտը քաղաքական գործչի կամ հանրային կերպարների կարծիքների և դիրքորոշումների բարձրաձայնման գործիք է հանդիսանում՝ տարածելով նրանց կողմից իրենց անձնական էջում կատարած գրառումները: Օրինակ, *«Խնդիրը ՀՀ-ում հնդիկների վերաբնակեցումը չէ, խնդիրը մենք ենք, որ պետություն չենք կարողանում ուժեղացնել»*[21], *««Համասեռամոլներին, տրանսգենդերներին, հնդիկ-պակիստանցիներին. բոլորին է ուղղված հարցս».*

Նկար 1. Իմիգրանտների ձայնի առկայությունն



[21] «Խնդիրը ՀՀ-ում հնդիկների վերաբնակեցումը չէ, խնդիրը մենք ենք, որ պետություն չենք կարողանում ուժեղացնել», հոդված lurer.com էլեկտրոնային թերթում, 08.01.2019 թ., հասանելի է՝ https://lurer.com/?p=308879&l=am

Պավել Մանուկյան»[22], *««Ո՞վ է վերահսկում «Զվարթնոց» օդանավակայանի ելքն ու մուտքը». Տիգրան Խզմալյան»*[23] և այլ նման հոդվածներն իրենցից ներկայացնում են անհատական գրառման վերարտադրություն լրատվական կայքում:

ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի արտաքին կապերի և հասարակական տեղեկատվության համակարգողը, անդրադառնալով Հայաստանում մեդիայի կողմից միգրացիայի ներկայացմանը, նշում է, որ միգրացիոն թեման շատ հաճախ լրագրողների կողմից հանրությանն է ներկայացվում առանց վերլուծության և փաստարկների: Նա բերում է հետևյալ օրինակը.

> *«ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի մոտ վերջերս ակցիա էր կազմակերպվել, լրագրողը հարցազրույց էր արել փախստականի հետ և այն թարգմանել էր մեկ այլ փախստական: Ֆրանգմենտացված, առանց այլ կողմերի տեսակետների, լրագրողը շտապել էր հանրայնացնել այդ տկլոր հարցազրույցը»*[24]:

Մասնագետն այս գործընթացում կարևորում է նյութը պատրաստողի լրագրողական կեցվածքը, էթիկան ու տրամադրվածությունը թեմային՝ նշելով, որ, հայ հասարակությունը հիմնականում բաց է օտարազգիներին հանդեպ, սակայն մեդիադաշտում հաճախ տրամադրվածությունը բացասական է:

Մեդիայում նյութերի հրապարակումները հաճախ իրականացվում են՝ հիմք ընդունելով այն, որ բացասական երևույթներն ու իրադարձություններն ավելի մեծ հետաքրքրություն են առաջացնում հանրության շրջանում (Gemi et al., 2013): Ուսումնասիրված լրատվամիջոցներում իմիգրանտների վերաբերյալ բացասական երանգ ունեցող անդրադարձերի մեծ ծավալը մի կողմից պայմանավորված է նյութի

---

[22] ««Համասեռամոլներին, տրանսգենդերներին, հնդիկ-պակիստանցիներին. բոլորին է ուղղված հարցս». Պավել Մանուկյան», հոդված mamul.am էլեկտրոնային թերթում 27.11.2019 թ., հասանելի է՝ https://mamul.am/am/news/165980

[23] ««Գուցե եւ հնդիկներն էլ են անհրաժեշտ, բայց...». Գեւորգ Դանիելյանի գրառումը», հոդված new.am էլեկտրոնային թերթում, 25.11.2019 թ., հասանելի է՝ https://news.am/arm/news/546207.html

[24] «Հնդիկները Հայաստանում. ավանդական մեդիան թափ հաղորդեց սոցմեդիայի քննարկումներին», հոդված media.am կայքում, 15.01.2019 թ. հասանելի է՝ https://media.am/hy/newsroom/2019/01/15/10872/

հանդեպ հանրության ուշադրությունը հրավիրելու ցանկությամբ և մյուս կողմից այնպիսի գործոններով, ինչպիսիք են լրագրողների համար իմիգրացիոն երևույթի նորությամբ, դրա հանդեպ ձևավորված ընդհանուր մոտեցման բացակայությամբ:

Միգրանտների ձայնի լսելիության մասին խոսելիս՝ հարկավոր է հաշվի առնել որոշ խոչընդոտներ, որոնց կարող են բախվել լրագրողները: Դրանք հիմնականում վերաբերում են իմիգրանտների՝ «չբացահայտված» լինելու ցանկությամբ պայմանավորված անհասանելիությանը, լրագրողների հանդեպ անվստահությանը և լեզվական խնդիրներին (Bigo 2002): Վերջինս լուրջ խոչընդոտ է նաև հավաստի տեղեկատվության ներկայացման համար, քանի որ լեզվական խնդիրները կարող են բերել խոսքի սխալ կամ ոչ ամբողջական ըմբռնմանը, սխալ մեկնաբանմանն ու նյութի թերի ներկայացմանը:

Իմիգրանտների և փախստականների մասին խոսելիս՝ լրատվամիջոցները հաճախ վերարտադրում են տարածված կարծրատիպերը, որոնք վերագրվում են կոնկրետ խմբերի՝ պայմանավորված վերջինիս էթնիկ, կրոնական, ռասայական առանձնահատկությամբ: Որոշ քննադատական մոտեցումներ, գտնում են, որ ՀԿ-ների, ԶԼՄ-ների և տարբեր այլ կառույցների դիրքորոշումը միգրացիայի և իմիգրանտների վերաբերյալ կփոխվի, եթե նրանք ավելի տեղեկացված լինեն լուսաբանվող երևույթից (Bigo 2002): Այս տեսանկյունից հատկապես կարևոր է դառնում լրատվամիջոցների իրազեկվածության անհրաժեշտությունը միգրացիոն գործընթացների վերաբերյալ:

ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության իրականացման հայեցակարգի[25] և ռազմավարության[26] փաստաթղթերում ԶԼՄ-ների հետ աշխատանքների մասին հիշատակվում է ՀՀ քաղաքացիների օտարերկրյա պետություններում աշխատանքային գործունեության կարգի և պայմանների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:

---

[25] ՀՀ կառավարության որոշումը ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին: Հասանելի՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=87590

[26] Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին:
Հասանելի է՝ http://www.mtad.am/u_files/file/iravakan%20akter/12-16ardz.pdf

Այս փաստաթղթերում ԶԼՄ-ներին անդրադառնում են իբրև իրազեկման գործիքի, որը հիշատակվում է արտագաղթի համատեքստում, իսկ ներգաղթի և ներգաղթյալների լուսաբանման առանձնահատկությունների վերաբերյալ անդրադարձ չկա։

2007 թվականին մարտի 10-ին ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ԶԼՄ-ների ղեկավարները և լրագրողական կազմակերպությունները ստորագրեցին Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, որը վերախմբավորվեց 2015 թվականի մայիսի 16-ին և մի շարք ԶԼՄ-ների կողմից մինչ օրս կիրառվում է։ Կանոնագրի ուսումնասիրության մեջ առանձին անդրադարձ չկա միգրացիոն գործընթացների լուսաբանման առանձնահատկություններին և մոտեցումներին, սակայն 5-րդ կետը «Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների և համամարդկային արժեքների նկատմամբ» իր ենթակետերով անդրադառնում է ազգային և կրոնական անհանդուրժողականության բացառմանը, մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից խուսափմանը, ահաբեկչական գործողությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման զգուշությանը։ Թեպետ կանոնագրում հստակ առանձնացված չէ մեդիայում միգրացիոն գործընթացներին անդրադարձի առանձնահատկությունները, սակայն կան սկզբունքներ, որոնք դիպուկ են իմիգրանտների մասին նորությունների ներկայացման համար։

Եզրակացություններ և առաջարկներ

2017 թվականին Հնդկաստանի Հանրապետության հետ վիզային ռեժիմի փոփոխությունը հանգեցրեց դեպի Հայաստան Հնդկաստանի քաղաքացիների ներհոսքի ավելացմանը: Վերջինս իր արձագանքը ստացավ մեդիադաշտում՝ իմիգրացիայի վերաբերյալ անդրադարձերի ավելացմամբ և տարբեր խոսույթների ձևավորմամբ: Այս ուսումնասիրության նպատակն էր դուրս բերել հայկական մեդիադաշտում իմիգրանտների վերաբերյալ լուսաբանումների առանձնահատկությունները և, համադրելով միգրացիոն և լրատվական ոլորտի կարգավորմանն ուղղված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների հետ, մշակել առաջարկներ ոլորտի մասնագետների համար: Ուսումնասիրության արդյունքում դուրս բերված եզրակացությունները և դրանց համապատասխան առաջարկները ներկայացված են ստորև:

Եզրակացություն 1. Մեդիադաշտում ձևավորվող խոսույթները զանազան են՝ կախված հասարակության տեսակից, իմիգրացիոն հոսքի ծավալից, ժամանողներից և այլն: Ընտրված լրատվամիջոցների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանի պարագայում ամենատարածվածները՝ ազգային անվտանգության և աշխատաշուկայի ապակայունացման սպառնալիքի խոսույթներն են: Վերջինիս վերաբերյալ ծավալվող քննարկումները հաճախ հանգեցնում են ազգային անվտանգության խոսույթին հետևյալ տրամաբանությամբ. իմիգրանտներն էժան աշխատուժ են և գալիս են զբաղեցնելու հայկական աշխատաշուկան, ինչը նպաստում է գործազրկության և, համապատասխանաբար, արտագաղթի ծավալների աճին: Սա իր հերթին ծնում է Հայաստանի հայաթափության և դրանից բխող ազգային անվտանգության հարցը:

Առաջարկ 1. Վերջին շրջանում միջազգային ուսումնասիրություններում նկատելի է իմիգրանտների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի դրսևորման խոսույթը, որը, սակայն, ավելի շատ ուղղված է փախստականներին և ակտուալ է նրանց վերաբերյալ անդրադարձերի պարագայում: Հայկական լրատվամիջոցներում նույնպես կարելի է

իրականացնել խոսույթների փոփոխություն կամ գոյություն ունեցողների համալրում: Աշխատաշուկայի ապակայունացման սպառնալիքի խոսույթին զուգահեռ, օրինակ, կարելի է լուսաբանել օտարազգի գործարարների գործունեությունը Հայաստանում՝ ցույց տալով, որ իմիգրանտները ոչ միայն զբաղեցնում են աշխատատեղերը, այլ նաև ստեղծում են դրանք:

Եզրակացություն 2. Դեպի Հայաստան իմիգրացիոն հոսքի ավելացումը, համընկնելով ՀՀ-ում տեղի ունեցած հեղափոխության հետ, սկսեց շահարկվել քաղաքական գործիչների կողմից՝ տնտեսական և ազգային անվտանգության խոսույթների միջոցով քաղաքական դաշտում իրենց դիրքավորելու համար: Ընտրված լրատվամիջոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեդիան ոչ միայն ինքն է ձևավորում իմիգրանտների մասին խոսույթներ, այլ նաև հանդիսանում են քաղաքական գործիչների կողմից ձևավորված խոսույթների ակտիվ տարածող:

Առաջարկ 2. Այս պարագայում առավել կարևոր է դառնում ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության՝ իբրև պաշտոնական կառույցի, առավել մանրակրկիտ տեղեկատվության տարածումն ու պարբերաբար թարմացումը: Հասարակության՝ իմիգրացիոն հոսքերի մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման նպատակով առաջարկվում է՝

- ✓ ՀՀ օտարազգիների մուտքերի և ելքերի մասին առավել մանրամասն և պարբերական տեղեկատվություն տրամադրել ոչ միայն հաշվետվության, այլ նաև մամլո ասուլիսների, բաց հանդիպում-քննարկումների, նորությունների և հոդվածների տեսքով,
- ✓ ՀՀ-ում իմիգրացիոն գործընթացի, դրա կարգավորման, արդյունքում առաջացող հնարավոր խնդիրների և դրանց լուծումներին ուղղված մեխանիզմների մասին տեղեկատվություն տրամադրել հոդվածների, մամլո ասուլիսների միջոցով:

Եզրակացություն 3. Ուսումնասիրված հոդվածներում բացակայում է խնդիրները կրողների՝ իմիգրանտների ձայնը, և փոխարենը ներկայացված է խնդրի մասին բարձրաձայնողների ձայնը: Սա ունի իր պատճառները, որոնք վերաբերում են

իմիգրանտների հետ հաղորդակցվելու դժվարություններին՝ պայմանավորված լեզվական խնդիրներով և իմիգրանտների՝ անտեսանելի լինելու ցանկությամբ, ինչպես նաև լրագրողների արժեքանորմատիվային համակարգին, հանդուրժողականության մակարդակին, երևույթի վերաբերյալ ունեցած իրենց դիրքորոշմանը: Այս իրավիճակը կարող է հանգեցնել միակողմանի տեղեկատվության տարածմանը և վերջինիս հիման վրա պատկերացումների ձևավորմանը հանրության շրջանում:

Առաջարկ 3. ԶԼՄ-ների և մի շարք այլ կառույցների մոտեցումներն ու պատկերացումները կփոխվեն լուսաբանվող երևույթի մասին, եթե նրանք առավել տեղեկացված լինեն ու ունենա համապատասխան գիտելիք (Bigo, 2002): Օտարազգիների իմիգրացիան նոր երևույթ է հայկական իրականության և, համապատասխանաբար, նաև հայկական մեդիադաշտի համար: Կարծրատիպային կամ միակողմանի տեղեկատվության տարածումը չեզոքացնելու կամ նվազեցնելու համար ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայությանը, ինչպես նաև ոլորտոց հետաքրքրված այլ կառույցներին խորհուրդ է տրվում ԶԼՄ-ների հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- ✓ պարբերաբար կազմակերպել լրագրողների համար միգրացիայի և միգրացիոն գործընթացների լուսաբանման առանձնահատկություններին ուղղված դասընթացներ,
- ✓ ԶԼՄ-ներին պարբերաբար տրամադրել միգրացիոն ոլորտում կատարվող փոփոխությունների, դրա հետևանքների մասին տեղեկատվություն,
- ✓ կարգավորել իմիգրանտների և լրագրողների՝ միմյանց հետ հաղորդակցման դժվարությունները,
- ✓ զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքում[27] ամրագրված լրատվության ոլորտում խոսքի ազատության սկզբունքը չխախտելով՝ նպատակահարմար կլինի լրատվական դաշտում գործող

[27] ՀՀ օրենքը զանգվածային լրատվության մասին:
Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1379

մասնագետների հետ համատեղ մշակել ուղեցույց՝ նվիրված միգրացիոն տեղեկատվության տրամադրման սկզբունքներին։

Եզրակացություն 4. Ուսումնասիրելով ԶԼՄ-ների կանոնակարգերի, էթիկայի կանոնների վերաբերյալ առկա նյութերը, միգրացիոն ռազմավարության փաստաթղթերը՝ տեսնում ենք, որ այստեղ բացակայում են միգրացիոն գործընթացների և իմիգրանտների լուսաբանման առանձնահատկությունների մասին դիտարկումները, ամրագրված դրույթներն ու նորմերը։ Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ օտարազգիների իմիգրացիան դեպի Հայաստան վերջին տարիների երևույթ է և դուրս է մնացել մասնագիտական հետաքրքրությունների շարքից։

Առաջարկ 4. Միգրացիոն երևույթները ԶԼՄ-ներում լուսաբանելուն ուղղված դրույթներ սահմանելու, միգրացիոն ռազմավարության մեջ լրատվամիջոցների հետ աշխատանքների վերաբերյալ սկզբունքներ ընդգրկելու համար ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայությանը խորհուրդ է տրվում մանրամասն ուսումնասիրել միջազգային փորձն այս ոլորտում. դիտարկել գոյություն ունեցող մոտեցումները, շրջանառվող փաստաթղթերը, հասկանալ դրանց կիրառելիության արդյունավետությունը հայկական իրականության համար։

Օգտագործված փաստաթղթեր

1. ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N 329-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին։
   Հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=111526
2. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N 329-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին։
   Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117361
3. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին։
   Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=87590
4. Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին։
   Հասանելի է՝ http://www.mtad.am/u_files/file/iravakan%20akter/12-16ardz.pdf
5. ՀՀ օրենքը զանգվածային լրատվության մասին։
   Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1379
6. Սահմանահատումների քանակը 2019 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների։
   Հասանելի է՝ http://migration.am/content/pdf/2019_border_ARM_0.pdf
7. Սահմանահատումների քանակը 2018 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների։
   Հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2018.pdf
8. Սահմանահատումների քանակը 2017 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների։
   Հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2017.pdf

9. Սահմանահատումների քանակը 2016 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների։
   Հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2016.pdf
10. Սահմանահատումների քանակը 2015 թվականին, վիճակագրական հաշվետվություն ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների։
   Հասանելի է՝ http://migration.am/content/pdf/Boundaries_2015.pdf

Գրականության ցանկ

1. Մարգարյան Ն., (2020) Բացահայտիր շահարկումը. բացասական շահարկման հնարքները Ֆեյսբուք սոցիալական ցանցում, ուղեցույց, Էլդորադո պրինտ, Գյումրի
2. Սարգսյան Ռ., Բալյան Լ., Հալևորյան Զ. (2019) ՀՀ մեդիայի սպառման և ապատեղեկացվածության մակարդակի ուսումնասիրություն, Հայաստան Հասանելիէ՝https://www.aprgroup.org/images/Library/NED_report/report_media_final_10.10.19_q.pdf?fbclid=IwAR29vaaLcnsTEyeparLtKI4NwsAsE3Agnzj_8eA19YfunSPqT0fe4JfZcsM
3. Bigo D., (2002) Security and Immigration: Toward a Critique of the Governmentality of Unease, Alternatives, 27 (1_suppl), 63–92. https://doi.org/10.1177/03043754020270S105
4. Bleiker R., Campbell D., Hutchison E. & Nicholson X., (2013) The visual dehumanisation of refugees, Australian Journal of Political Science, 48:4, 398-416
5. Caviedes A. (2015) An Emerging 'European' News Portrayal of Immigration?, Journal of Ethnic and Migration Studies, 41:6, 897-917, DOI: 10.1080/1369183X.2014.1002199
6. Chavez, L. R. (2001) Covering immigration: Popular images and the politics of a nation. Berkeley, CA: University of California Press
7. De Cleen, B., Zienkowski, J., Smets, K., Dekie, A., Vandevoordt, R., (2017) Constructing the 'refugee crisis' in Flanders. Continuities and adaptations of discourses on asylum and migration. In: Barlai, M., Fähnrich, B., Griessler, C. and Rhomberg, M. (Eds.), The migrant crisis: European perspectives and national discourses. Berlin: LIT Verlag (pp. 59-78)
8. Figenschou T.U., Thorbjørnsrud K., (2015) Faces of an Invisible Population: Human Interest Framing of Irregular Immigration News in the United States, France, and Norway American Behavioral Scientist, Vol. 59(7) 783–801
9. Gemi E., Ulasiuk I., Triandafyllidou A., (2013) Migrants and media newsmaking

practices, Journalism Practice, 7:3, 266-281, DOI: 10.1080/17512786.2012.740248

10. Hall S., (1990) The whites of their eyes: Racist ideologies and the media. In: Alvarado M and Thompson JO (eds) The Media Reader. London: BFI, pp. 7–23
11. Heidenreich T., Eberl J., Lind F., Boomgaarden H., (2020) Political migration discourses on social media: a comparative perspective on visibility and sentiment across political Facebook accounts in Europe, Journal of Ethnic and Migration Studies, 46:7, 1261-1280, DOI: 10.1080/1369183X.2019.1665990
12. Ihlen Ø., Thorbjørnsrud K., (2014) Making news and influencing decisions: Three threshold cases concerning forced return of immigrants, European Journal of Communication, Vol. 29(2) 139–152, SAGE Publications
13. Public Opinion Survey: Residents of Armenia, October 9–29, 2018 հասանելի է՝ https://www.iri.org/sites/default/files/2018.11.23_armenia_poll.pdf
14. Public Opinion Survey: Residents of Armenia, September–October 2019 հասանելի է՝ https://www.iri.org/sites/default/files/wysiwyg/iri_poll_armenia_september-october_2019.pdf
15. Saifuddin A., Matthes J. (2016) Media representation of Muslims and Islam from 2000 to 2015: A meta-analysis, the International Communication Gazette 0(0)1–26
16. Schreier M., (2014) Qualitative Content Analysis, in: The SAGE Handbook of Qualitative Data Analysis, London Print ISBN: 9781446208984, 170-183
17. Schudson M., (1997) The Sociology of New Production. In Social Meanings of News: A Text-reader, edited by Daniel Berkowitz, 722. London: Sage
18. Tuchman G., (1978) Making News: A Study in the Construction of Reality. The Free Press, New York
19. Tyler I., Marciniak K., (2013) Immigrant protest: an introduction, Citizenship Studies, 17:2, 143-156, DOI: 10.1080/13621025.2013.780728